

ՏԱՍՆԵՐՈՐԳ ԿԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբլի:

Առանձին նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն անդադրված մեջ:

Ստամբուլում գրվում են անդադրված մեջ:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

(Կապույտ գրքերը 10 կոպեկով):

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

Կապույտ գրքերը 10 կոպեկով:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Շամախուց: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Կարգադրական յօդուած (Թայմի): Կ. Պօլսի Ազգային ժողով: Մի ցաւով պակաս: Նամակ Թիֆլիսից: — ՀՆՈՒՎՈՒՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մի նոր գիրք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՔԻՆ

Հոկտեմբերի 14-ին

Շամախում մարդ որքան ցանկանայ, որ մի ընտանեկան, ազգային և կամ առհասարակ հասարակական գործում տեսնի իրազայ, կանոնաւոր ընթացք, նոյնքան նա համոզված պիտի լինի, որ դա անկարելի բան է նրա համար շամախեցոյ կողմից: «Մշակի» գոյութեան օրից Շամախուց քիչ նամակներ չեն սպված այդ լրագրի էջերում, քիչ չէ քարոզ կարգադրել քաղաքացոյ գլխին, քիչ չէ յայտնված նրանց խոշոր պակասութիւնները, քիչ չէ նրա խոշոր նրանք, որ քանի ժամանակը ոչ չէ, աշխատեն ետ չը մնալ այլ քաղաքների առաջադէմ հասարակութիւններից, սակայն բոլորը եղել են ի դուր աշխատանք: Այդ նամակները, ինչպէս և այժմ է, եղել են փողոցներում և հացկերոյթներում գուարճախոսութեան առարկայ, ոչ ով չէ կամեցել և չէ էլ կամենում մինչև այսօրս անդամ, մտածել շատ թէ քիչ այն նամակներում իրանց վրա գրած պակասութիւնների մասին, մի խօսքով չեն աշխատում դրսուցել և բարեք են համարում հին, նահապետական մարդավարութեան մէջ ապրել: Սրան լաւ ապացոյց կարող է լինել այն, որ ոչ մի ժամանակ չես տեսնի նրանց որ նրանք կարգադրու լինեն «Մշակի» առաջնորդող յօդուածները, դուրս բերեն նրանցից իրանց ուղղութեան համար հարկաւոր լաւ օգտակէտ մտքեր, գործ գնեն այդ յօդուածների մէջ գրված ընտիր, ճշմարիտ, անկեղծ, անշահասէր խորհուրդները իրանց կեանքի բարորութեան համար, այդ շնորհակ խորհուրդներից իրանց համար մտքի պա-

շար պատրաստեն, չէք տեսնի որ այդ հասարակութեան անդամներից շատերը, բացի մի քանիստներից, հետաքրքրվեն կարգալ պ. պ. Գ. Նիկողոսեանի, Բաֆֆիի, Մէլք-Բեկլարեանի, Կարգաբանի, Արմենակի, Հայկալի և շատ ուրիշ ազնիւ երկրաստորդների բնագոյն յօդուածները, զբարտառութեան տեղ զրուցեն այդ շնորհալի յօդուածների վրա, օգուտ քաղեն նրանցից: Միով բանիւ մարդ սպշած է մնում, երբ նայում է նրանց ստանադարութեան, անտարբերութեան և անզգայութեան վրա դէպի լաւը, հեղը, բարին, օգտակէտը: Զրգարութիւնները և բամբասանքը մենք հայերս այնքան սիրում ենք, որ ամեն փոստով հայ լրագրիներում պարտաւոր նամակների ենք սպասում և եթէ մի փոստ անցնում է և ոչինչ սրա նման չէ լինում, յայնժամ շատ տխուր ենք լինում, և ասում ենք՝ «Մշակում» կամ «Մեղուի» մէջ ուղղութեան արժանի բան չը կայ: Շամախում 846 տուն հայ բնակիչ կայ, որոնք չունեն ոչինչ կարօտութիւն առաջադիմութեան մէջ, այլ մենք ընդունակ ենք միայն բամբասանքներով պարապել, ուրիշ ոչինչով: Վերջացնելով նամակս պիտի խոստովանվեմ, որ մի տասը տարի էլ կանցնի և մենք, շամախեցի հայերս ոչինչ քայլ չենք անի առաջադիմութեան մէջ և այն ժամանակ մեր սերունդը կը դատապարտէ մեզ մեր անհոգութեան համար: Աշխատենք ուրեմն քանի ոչ չէ:

Ա. Մէլք-Շահնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ԲԱՌՈՒՄԻՅ Կ. Արշակ Դատարանից 4 ռուբլ բաժանորդագին Վիեննայի «ժուրնալ դ'Օրիան» լրագրի: Առաջվայ փողերի հետ կանի 1126 ռուբլ 53 կոպեկ:

Կ. Պօլսի «Մասիս» լրագրի 7 հոկտեմբերի համարի մէջ կարգում ենք հետեւեալ հարցումը: Ղէպի մեզ ուղղված: «Պատեական Մշակից ներկայ տարվայ յունվար 10 թւոյն մէջ 94 ռուբլի և 18 կոպեկի գումար մը յիշված է Զուգայէն զրկված. կը խնդրեմ որ հաճիք իմանալ և ծանուցանել թէ այն գումարն ո՞ր մնացած է կամ

ն.մ. յանձնված, որովհետեւ դուրս մէջ 43 ռուբլի (հինգ օսմանեան լիրա) գումար մը կայ, զոր Պարսկաստանի և Հնդկաստանի գեր. առաջնորդն ուղարկած է ի հայր բաժանորդագրութեան «Մասիս» և մինչև այսօր մեր ձեռք չէ հասած»: Պ. Իւթիւճեանի այդ հարցմանը մենք միայն այսքան կարող ենք պատասխանել: «Մշակի» յունվար 10 համարի մէջ (№ 2 նորիայ 1881 թւի) մենք գտնում ենք հետեւեալ ներքին լուրը: «Ստացանք պ. Տիրգրան Տէր-Օհանեանցի ձեռքով 94 ռ. 18 կոպ., որ հանգանակված է Սպահանի մէջ յօգուտ Վանի սովատանջների» (Արեմի պ. Տիրգրան Տէր-Օհանեանց, յանձնելով մեզ յիշեալ գումարը, ոչինչ չէր ասել մեզ թէ այդ գումարի մէջ կայ և «Մասիս» բաժանորդական փողը, իսկ եթէ նա այդ իմանար, երեւմեզ կատէր: Բայց որովհետեւ մեզ ոչինչ չասեց, մենք ամբողջ գումարը, ինչպէս և յայտնվեցաւ մեզ, յատկացրինք սովետոյ գումարին: Այժմ կը սպասենք պ. Տէր-Օհանեանցի բացատրութեանը:

Մեզ հարցրում են հետեւեալը: «Զեր լրագրի անցեալ տարվայ համարներից մինի մէջ, յիշված էր որ յարգելի կոչս Մանէ Լօրիս-Մէլքեան իր ծախսով բաւական մեծ տարածութիւնից Արնակ գիւղի բնակիչների համար բերել է տուել շուր, բայց դժբաղդաբար այս գործի վրա կարգած հողօրարձուների անհոգութեան պատճառով բանը մնացել է թերի, այնպէս որ այս տարի նոյն յարգելի կոչսը, գնալով յիշեալ գիւղը և տեսնելով որ իր բոլոր աշխատանքները և ծախսած փողերը դուր են անցել, սկսում է այժմ գործին ինքն ձեռք զարկել և իր վերահսկողութեամբ ու անխնջ աշխատանքով աւարտել տալ նոյն աղբիւրի անցկացնելը, որի համար 1,000 ռուբլ ծախս և մեծ նեղութիւններ է կրել: Կոչսի ջանքերը գնահատելով, Սահանի վանքի Վարդան եպիսկոպոսը վարձատրում է կոչսին ընծայելով նրան մի ֆրիչական քանդակագործ փայտեայ պատկեր, փշեայ պատկով, որ ինչպէս երևում է գտնված է եղել Ախուրան գետի եզրին 1862 թւին: Կայսրուպոսի կարծիքով պատկերը պէտք է երբեմն հայերը գցած լինեն գետը, թշնամու երկիւղից: Պատկեր

ըր այժմ գտնվում է Թիֆլիսի հայոց կուսանայ եկեղեցում:

ԳԱՆՁԱԿԻՑ մի պարոն գրում է մեզ: «Սկրսելով արկին Ա. Ն. Աննիսիւ «Вратъ и Сестра» մանկական վեպի թարգմանութիւնը, պատիւ ունեմ սրա մասին յայտնել պ. պ. թարգմանիչներին»:

Պ. Վախտանց Տէր-Մետրոպոլիտն խնդրում է մեզ յայտնել թարգմանիչներին, որ նա արդէն թարգմանել է «Густавъ Ваза» մանկական վեպը, որ և շուտով լայս կը տեսնի:

ԲԱՎՈՒՄԻՅ մեզ գրում են: «Հաստատ լուր է որ տէր Թադէոս Բուդաղեանց թողնում է կրօնուսոյցի պաշտօնը, որ վարած է 20 տարվայ ընթացքում տեղիս րէալական դպրոցում: Աշակերտները երբէք գոհ չէին տէր հօր դասատուութիւնից: Յանկալի է որ Թադէոս քահանայի տեղ նշանակվի Խորեն Միրզաբեկեանց քահանան: Սա իր համեստ բնաւորութեամբ յայտնի է ամենքին և որպէս փորձառու ուսուցիչ իր դասատուութեամբ մեծ օգուտ կարող է բերել մեր մանուկներին, թէ սովորեցնելով նրանց կրօնագիտութիւնը և թէ ձգելով նրանց մէջ սէր դէպի մայրենի լեզու»:

ԹԻՖԼԻՍԻ բեղիկական հիւպատոս պ. Վրէլ, խնդրում է մեզ տպել հետեւեալ ազգարարութիւնը: «Նորին Մեծութեան բեղիկացիների Թագաւորի հրամանով, որ կայացաւ 14-ին դեկտեմբերի 1874 թւին, նշանակված է մի տարեկան մրցանակ 25 հազար ֆրանկ գումարի, մրտաւոր աշխատանքները քաջակերելու նպատակով: Մրցանակը վերաբերվելով միջազգային երկրորդ կօնկուրսի, կը արվի 1885 թւին այն աշխատանքին, որ կը մշակի և կը զարգացնի անմնալաւ միջոցները և մեթոդները Աշխարհագրութեան ուսումնասիրութիւնը հեշտացնելու և այդ առարկայի դասատուութիւնը իրականացնելու այլ և այլ աստիճանների զբարոյների մէջ: Օտարները, որոնք կը կամենան մասնակցել այդ մրցանակին, պարտաւոր կը լինեն ուղարկել իրանց աշխատասիրութիւնը,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ

Երևանի «Պատկ» լրագրի տպարանից շատ ժամանակ չէ լայս տեսաւ «Մարդակազմութիւն հայոց ուսումնարանների համար», գիրքը, աշխատասիրութիւն: Երևանի քաղաքային բժիշկ Լեոն Տիրգրանեանցի: Այդ գրքի քննութիւնը խոստացել ենք մի անգամ ներկայացնել ընթերցողներին: Ահա փորձում ենք:

Այդ դասագրքում ընդունված է ցուցական ձևը (սխտեմա), որով պէտք է ուսուցանել մարդակազմութիւնը գործնականապէս, այսինքն ցոյց տալով մարմնի իւրաքանչիւր մասը: Մարմնի այն մասերը, որոնց չէ կարելի ցոյց տալ կենդանի մարդու վրա (մկուշները, ներքին գործարանները, ներարգները և այլն), բժիշկը այնպէս է նկարագրում, որ կարելի է անատոմիաների վրա ցոյց տալ հարկաւոր մասերը, նմանապէս բացատրում է թէ ինչպէս պէտք է պատրաստել միկրոսկոպիական պրէպարատները, որ կարելի լինի, հարկաւոր ժամանակ, ծանօթացնել աշակերտներին մարմնի մանրամասնութիւնների— միկրոսկոպիական անատոմիայի հետ:

Բժիշկն աշխատել է, ինչպէս երևում է, ջոկել անատոմիան Ֆիզիոլոգիայից, որովհետեւ եթէ միանցնենք են (ինչպէս շատերն ասում են) այդ եր-

կու միմանց հետ շատ սերտ կապված գիտութիւնները, այն ժամանակ աշակերտները չը կարողանալով զանազանել անատոմիական ֆիզիոլոգիականից, պէտք է իրանց գլխում կազմեն խառնափնթոր դադափարներ և պատկերներ թէ անատոմիայի և թէ ֆիզիոլոգիայի փաստերի մասին: Այդ երկու գիտութիւնները պէտք է միշտ զատ զատ ուսումնասիրել, որ կարելի լինի կատարելապէս ըմբռնել դրանց: Զոկելով այդ երկու գիտութիւնները պ. Տիրգրանեանցը պէտք է իր պարտքը համարէ տպագրել նմանապէս և ֆիզիոլոգիայի մէկ կարծառօտ դասագիրք հայոց ուսումնարանների համար, որով պ. բժիշկը լըրացրած կը լինի դասատուութեան համար գիտութեան մի շրջան, որ անչուրտ հարկաւոր է գիտնալ ամենայն ուսումնաւորտ մարդու:

Տիրգրանեանցի դասագրքի մէջ մարդու կազմուածքն այնպէս է նկարագրված, որ ընդհանուրից անցնում է դէպի մանրամասնութիւնները: Այդ ձևով հնչուցվում է մանրամասնութիւնները: Երբ ըմբռնելը, Այդ դասագրքը, մեր կարծիքով, վրակատար է, նաև նկարագրված է նրա մէջ աննահասականալի կերպով մարմնի մի քանի հարկաւոր գործարանների միկրոսկոպիական կազմուածքը: Բժիշկը բաղաւորապէս արձամարհելով ընդունված հին նախապաշարմունքը, նկարագրել է և սեռական անդամների կազմուածքը, որ նմանապէս, մեր կարծիքով, անհրաժեշտ է գիտնալ իւրաքանչիւր մարդու, որովհետեւ այդ գործարանները շատ ծանրակշիւ գեր են յազում կեանքի մէջ և պէտք է ուսուցանվեն ս.ս.անց

նախապաշարմունքի, ի հարկէ միայն վ երին դասատուներում: Եթէ ուսումնասիրում ենք թողք, սիրտը, ստամոքսը,—ինչի նոյնպէս չուսումնասիրենք և սեռական անդամները:

Հեղինակը գրել է այդ գիրքը այն ընդարձակութեամբ, որ ի հարկէ և լայնամասն ձևարարում և ներսխեան զգոցում կարելի լինի գործադրել նրան, իսկ համատեղելով կարելի է գործադրել նրան և մեր միւս ուսումնարաններում:

Դասագրքի միակ, բայց խոշոր պակասութիւնն այն է, որ չունի իր մէջ ատլաս (պատկերներ), Բայց և այն էլ պէտք է ասենք թէ չը կայ հայ յերէն լեզուով ոչ մի դասագիրք անատոմիայի, որ ատլասով լինէր: Այդ տեսակ դասագրքի մէջ պէտք է լինի կամ ընտիր ատլաս կամ թէ բոլորովին ատլաս չը լինի, որովհետեւ վատ սկարեներից բան հասկանալ սովորողի համար անկարելի է: Յ. բժիշկը երեի գգաւով ստալալ պակասութիւնը և անկար լինելով պատկերազարդ տպագրել իր այդ գիրքը, գրել է հայերէն տեխնիկական խօսքերի մօտ դրանց լատիներէն նշանակութիւնը, որպէս զի ուսանողը կամ ուսուցիչը կարողանայ այդ գիրքը կարդալուս օգուտ քաղել եւրօպական պատուական առլասներից, իսկ այն պարոնների համար, որոնք լատիներէն կամ (որ նոյն է) Ֆրանսերէն տառերը չը գիտեն, կամ թէ չեն կարող հասկանալ մի որ և է հայերէն տեխնիկական խօսք, տեղաւորել է գրքի վերջում բառարան հայերէնից ուսուցիչին, որ այդ պարոններին կարելի լինի օգուտ քաղել և ուսուցանանաւորական առլասներից: Տիրնիկական

բառերը հեղինակը վերցրել է իր տպագրած անատոմիական բառարանից (1879 թ.) որ հաւաքել և մշակել է 9 տարի շարունակ:

Վերջապէս պէտք է ասել, որ Լեոն Տիրգրանեանցի աշխատանքը նպատակաշարժոր է, լեզու պարզ է, և գիտութիւնը նկարագրած է հասկանալի ձևով:

Խորհուրդ ենք տալիս մեր բնապէտ ուսուցիչներին ձեռք բերել և ծանօթանալով այդ գրքի հետ, յարմարեցնել և փոքր ուսումնարանների համար, պահպանելով դասատուութեան ժամանակ ցուցական ձևը, որ հեշտացնում է այդ կարևոր առարկան ուսուցանելու և հասկանալու:

«Մարդակազմութիւն հայոց ուսումնարանների համար», գիրքը բաղադրած է 123 էրէտից (որոնցից յառաջարկան է 12 էրէտ, մարդակազմութիւնը 84 է. և բառարանը 27 է.): Գինն է 50 կօպ., ծախվում է Թիֆլիզում կենսորոնական գրամատանոցում և Երևանում հեղինակի մօտ, որին դիմել կարելի է հետեւեալ հասցեով: Ծրի-ванъ, городовому врачу Тиграняну:

Յօդուածի վերջում հարկաւորութիւն ենք համարում աւելացնել, որ մենք մեր կարողութեան չափ գնահատեցինք մեր հեղինակի աշխատութիւնը: Եթէ, պատահամբ, մի քանի սխալ են թաղութիւններ արեցինք գրքի այն կամ այն մասի վերաբերմամբ, պատրաստ ենք տպագրել նոյն իսկ հեղինակի պատասխանը մեր լրագրի էջերում:

Ա.

